ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1822-Ա «20» մայիսի 2024 թ.

«ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ «ԿԱՄԵՐԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ Ի ՊԱՀ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով «Ժամանակակից արվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատարի 07.05.2024թ. հ. ԺԱԹ 1/12-24 գրությունը.

1. Թույլատրել «Ժամանակակից արվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի տնօրենին՝ թանգարանին ամրացված, Երևան համայնքին անհատույց, անժամկետ օգտագործման հանձնված գույքի կազմից թանգարանի հիմնական ֆոնդում ընդգրկված առարկաները, համաձայն հավելվածի, ժամանակավոր (մինչև 2024թ. հունիսի 21-ը) ի պահ հանձնել «Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ Հակոբ Հակոբյանի 100-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում անցկացվող ցուցահանդեսին ցուցադրելու նպատակով:

2. Լիազորել «Ժամանակակից արվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի տնօրենին՝ «Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ կնքել պայմանագիր՝ ի պահ հանձնվող առարկաների տեղափոխման, պատշաճ պահպանման և ետ վերադարձնելու վերաբերյալ:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետի և «Ժամանակակից արվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի տնօրենի վրա:

4. Սույն որոշման կատարման հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
20.05.2024թ.
հ. 1822-Ա որոշման

ՑԱՆԿ
«ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ «ԿԱՄԵՐԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ Ի ՊԱՀ ՀԱՆՁՆՎՈՂ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ

N	Հեղինակը, թանգարանային առարկան	Նյութը և տեխնիկան	Չափսերը /սմ/	Հաշվառանիշը	Ապահովագրական արժեքը /ՀՀ դրամ/
1	Հակոբ Հակոբյան «Հայելիով կինը», 1969	կտավ, յուղաներկ	139x94,5	ԵԺԱԹ-807/3	30.000.000
2	Հակոբ Հակոբյան «Ոչ նեյտրոնային ռումբին», 1978	կտավ, յուղաներկ	205x298	ԵԺԱԹ-150	50.000.000
3	Հակոբ Հակոբյան «Կայարանում», 1979	կտավ, յուղաներկ	114x162	ԵԺԱԹ-199	30.000.000
4	Հակոբ Հակոբյան «Քաղաքում», 1979	կտավ, յուղաներկ	114x162	ԵԺԱԹ-200	30.000.000
5	Հակոբ Հակոբյան «Էջմիածնի ճանապարհին. Աշուն», 1970	կտավ, յուղաներկ	92x138	ԵԺԱԹ-807/5	30.000.000
6	Հակոբ Հակոբյան «Ձկնորսը», 1973	կտավ, յուղաներկ	124x64	ԵԺԱԹ-807/1	30.000.000
7	Հակոբ Հակոբյան «Գործիքներով նատյուրմորտ», 1973	կտավ, յուղաներկ	96x130	ԵԺԱԹ-8	30.000.000
8	Հակոբ Հակոբյան «Միայնակ մարդը», 1962	կտավ, յուղաներկ	153x90	ԵԺԱԹ-807/2	30.000.000
9	Հակոբ Հակոբյան «Սումգայիթ», 1988	կտավ, յուղաներկ	90x130	ԵԺԱԹ-371	30.000.000

10	Հակոբ Հակոբյան «Բնանկար /Ցանկապատ/», 1970	կտավ, յուղաներկ	97x144	ԵԺԱԹ-807/4	30.000.000

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ